ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
ДОКЛАДЫ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ REPORTS
Հատոր Том Volume 101 2001 № 2

ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՈՒԴԴ 551.444:556.18

Հ. Վ. Թոքմաջյան, Լ. Ս. Չիլինգարյան, Վ. Բ. Մկրտչյան,
Հ. Ֆ. Մելքոնյան, Ս. Վ. Սիմոնյան

Ջրային տնտեսության բնագավառում օգտագործվող հիմնական սահմանումները և հասկացությունները

(Ներկայացված է ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանի կողմից 19/1 2001)

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի [1] հոդված 1-ում տրվում են ջրային տնտեսության բնագավառում օգտագործվող հիմնական սահմանումները և հասկացությունները, որոնք հետագայում օգտագործվում են Օրենսգրքի մյուս հոդվածներում, նպատակ ունենալով միարժեքորեն ներկայացնել համապատասխան հասկացությունը կամ գործողությունը: Սակայն, բերված սահմանումներն ու հասկացությունները ոչ միայն լիովին չեն ընդգրկում այդ ոլորտը, այլև, որոշ դեպքերում, տեղի են տալիս երկակի մեկնաբանությունների, ինչը օրենսդրության մեջ անընդունելի է:

Օրենսգրքի հոդված 1-ում առանց սահմանելու «ջրային ռեսուրսներ» հասկացությունը, տրվում է.

«Ջրային օբյեկտներ – երկրի մակերեսի և ստորերկրյա ջրեր: Լինում են բնական (գետեր, լճեր, առվակներ, ճահիճներ, ստորերկրյա ջրավազաններ) և արհեստական (ջրամբարներ, արհեստական լճակներ ե այլն)»:

Սահմանման առաջին մասն առավել մոտ է «ջրային ռեսուրսներ» հասկացությանը և, մեր կարծիքով, անհաջող փորձ է արված համատեղելու «ջրային ռեսուրսներ» և «ջրային օբյեկտներ» հասկացությունները: Ճիշտ կլինի նախ սահմանել «ջրային ռեսուրսներ» հասկացությունը որպես մակերևութային և ստորերկրյա բնականորեն վերականգնվող ջրային պաշարներ, որոնք կարող են օգտագործվել մարդկանց կենցաղային կարիքների, ինչպես նաև երկրի տնտեսության տարբեր նպատակների համար: Ընդ որում մակերևութային ջրերի բնական ռեսուրսները՝ դա բնականորեն վերականգնվող գետային հոսքն է և լճերի բնական ջրային պաշարները (բնապահպանության նպատակով լճերի բնական պաշարներից օգտագործվում է միայն նրանց բնական հոսքը, որը սնում է գետերին կամ առաջացնում է առանձին գետ): Ստորերկրյա ջրերի բնական ռեսուրսները չխախտված պայմաններում ջրատար հորիզոնի սնման մեծությունն է: Հարկ է նշել, որ հոսքի կանոնավորման նպատակով մարդու կողմից ստեղծված կառուցվածքների միջոցով, ի հաշիվ

վերականգնվող ջրային ռեսուրսների կուտակվող կամ տեղափոխվող ջրերը արհեստական պաշարներ են: Սա է «ջրային ռեսուրս» և «ջրային պաշար» հասկացությունների տարբերությունը: Ընդ որում, սահմանելով «ջրեր» հասկացությունը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դա ջրային օբյեկտներում առկա ջուրն է: Եվ քանի որ ջրային օբյեկտների որոշակի մասն ըստ պատկանելիության կարող են լինել ոչ պետական սեփականություն, ապա «ջրեր»-ի տարանջատումը «ջրային ռեսուրսներ»-ից կարևորվում է վերջինիս՝ պետության սեփականության բացառիկ իրավունք վերապահելու պատճառով:

«Ջրային օբյեկտներ» հասկացությունը [2]-ում որակվում է որպես ջրերի կենտրոնացում – ցամաքում՝ ռելիեֆի համապատասխան ձևերում, իսկ ընդերքում՝ ջրի ռեժիմի սահմանների և այլ ուրվագծերի առկայության դեպքում: Ի թիվս գետերի, լճերի, ճահիճների, ջրանցքների և այլն, [5]-ում, որպես ջրային օբյեկտների բաղկացուցիչ մաս, նշված են օվկիանոսները, ծովերը և մշտական ձնածածկույթները: ՀՀ ջրային օրենսգրքում օվկիանոսները և ծովերը կարելի է չնշել՝ վերջիններիս բացակայության պատճառով: Մշտական ձնածածկույթներ հանրապետությունում նույնպես գրեթե չկան, և առանց էական սխալի այս հասկացությունը ՀՀ ջրային օբյկտների ցանկում նույնպես կարելի է անտեսել:

Մոլդովայի Ջրային օրենսգրքում [3], «ջրային օբյեկտներ» հասկացությունը սահմանված է հոդված 16-ում.

«Օգտագործման տրամադրվում են այն ջրային օբյեկտները, որոնք թվարկված են հոդված 2-ում»,

երբ հոդված 2-ը «Պետական միասնական ջրային ֆոնդ» անվանումը և հետևյալ շարադրանքն ունի.

«Պետական միասնական ջրային ֆոնդը ներառում է.

ա) գետերը, լճերը, ջրամբարները, այլ մակերևութային ավազանները և ջրաղբյուրները, ինչպես նաև ջրանցքների ջրերը;

բ) ստորերկրյա ջրերը»:

Մեր կարծիքով «ջրային օբյեկտներ» և «ջրային ֆոնդ» հասկացությունների աղավաղումն ակնհայտ է: Օրենսգրքում ջրային ֆոնդից դուրս են դրված ջրատնտեսական կառուցվածքները, որով և փաստացի նույնացված են այս երկու հասկացությունները: Որոշակի առումով նմանատիպ սխալ կա նաև ՀՀ ջրային օրենսգրքում: Առկա է ևս մեկ ընդհանուր սխալ: ՀՀ ջրային օրենսգրքում ունենք.

Հոդված 4. «Պետական միասնական ջրային ֆոնդ – Հայաստանի Հանրապետության բոլոր ջրերը (ջրային օբյեկտները) կազմում են պետական միասնական ջրային ֆոնդը»:

Միարժեքորեն ժխտելով նշված հոդվածում «ջրեր» հասկացությունը կիրառելու իրավունքը (ասենք նաև, որ Օրենսգրքի հոդված 1-ում այդ հասկացությունը սահմանված չէ), նշենք, որ հայեցակարգային սխալ կա հենց հասկացության անվանման մեջ: Ասելով «Պետական միասնական ջրային ֆոնդ», փաստորեն բացառում ենք, որ բացի պետությունից որեէ ջրային օբյեկտի սեփականատեր կարող է լինել այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հակասում է ՀՀ սահմանադրությանը և ազատ տնտեսական համակարգի գաղափարախոսությանը: Անհրաժեշտ է հոդված 4-ը հանել Օրենսգրքից, իսկ «ջրային ֆոնդ» հասկացությունը (առանց «պետական» բառի) սահմանել հոդված 1-ում:

Օրենսգրքում սահմանված է.

«Ստորերկրյա ջրային պաշարներ – երկրի կեղևի վերին շերտում եղած ջրերի քանակություն»: Ինչու՞ «երկրի կեղևի վերին շերտերում», այլ ոչ թե «երկրի ընդերքում»:

«Ստորերկրյա ջրեր» հասկացությունը [4]-ում ներկայացված է. «ջրեր, որոնք գտնվում են երկրաբանական ապարների ստվարաշերտում, երկրի կեղևի վերին մասում, հեղուկ, պինդ և գոլորշի վիճակում»:

Հավանաբար այս սահմանումն է հիմք հանդիսացել ՀՀ ջրային օրենսգրքում նման ձևակերպում տալու համար: Մեր կարծիքով նպատակահարմար է օգտագործել «երկրի ընդերքում առկա ջրային ռեսուրսները» սահմանումը: Ինչու՞ «ջրային ռեսուրսներ», այլ ոչ թե «ջրեր»: Որովհետև, համաձայն մեր հայեցակարգի, ստորերկրյա բոլոր ջրերը պետք է լինեն պետական սեփականություն, այսինքն՝ մինչև արդյունահանումը պետք է հանդիսանան «ռեսուրս», այլ ոչ թե «ապրանք»: Միևնույն ժամանակ, հոդվածում սահմանված չէ «մակերևութային ջրեր» հասկացությունը, որը բազմաթիվ անգամ օգտագործվում է Օրենսգրքի հետագա հոդվածներում: Ի տարբերություն ստորերկրյա ջրերի, մակերևութային ոչ բոլոր ջրերն են ռեսուրս: Գետում ջուրը «ռեսուրս» է, բայց մասնավոր ջրատարում կարող է լինել «ապրանք»: Այդ պատճառով սահմանման մեջ անհրաժեշտ է օգտագործել «ջրեր» բառը:

Քանի որ օգտագործման հետևանքով ջուրը կարող է անվերադարձ սպառվել, ապա անհրաժեշտ է տարանջատել «վարձակալում» և «սպառում» գաղափարները: «Վարձակալում» ասելով հասկանում ենք գործարք՝ ջուրը ետ վերադարձնելու պայմանով, ջուրը ջրօգտագործողներին տրամադրելը: Անհրաժեշտ է նշել, որ սա կարևոր նշանակություն ունի տնտեսական քաղաքականության իրականացման տեսանկյունից, քանի որ տարբեր նպատակներով օգտագործվող ջրի սակագները պետք է տարբեր լինեն: «Ջրի սպառում» ասելով, պետք է հասկանալ բնակչության և տնտեսության պահանջները բավարարելու համար ջրի անվերադարձ օգտագործում: Ինչ վերաբերում է հոդված 1-ում բերված «ջրսպառում» հասկացությանը, այն է՝ «ջրի սպառում ջրային օբյեկտներից», ապա այն անընդունելի է և՛ իրավական, և՛ հայեցակարգային առումներով: Այն Օրենսգրքից պետք է հանվի: «Ջրօգտագործում» ասելով պետք է հասկանալ՝ ջուրը վարձակալության կամ սպառման տրամադրելը: Այստեղ «ջրային ռեսուրս» հասկացությունը չի կարելի կիրառել, քանի որ սպառման և վարձակալության կարող է տրվել նաև «ապրանք» դարձած ջուրը:

«Ջրերի աղտոտում» հասկացության շրջանակներում հաշվի չի առնված աղտոտումը, որն առաջանում է բնական երևույթների հետևանքով: Այն պակաս կարևոր չէ, քան մարդածին գործունեության հետևանքով առաջացած աղտոտումը, և այդ դրույթն անհրաժեշտ է ավելացնել «ջրերի աղտոտում» սահմանման մեջ:

«Ջրերի պահպանում» հասկացության մեջ նշված է միայն ջրերը աղտոտումից, աղբոտումից և սպառումից պահպանելու անհրաժեշտությունը: Կարևոր է առանձին սահմանել «ջրային օբյեկտի հյուծում» հասկացությունը, որը պետք է հաշվի առնի ջրային օբյեկտի բարվոք էկոլոգիական վիճակն ապահովող նվազագույնը: Ընդ որում, նպատակահարմար է օգտագործել ավելի ընդգրկուն «էկոլոգիա», այլ ոչ թե նեղ շրջանակներ ունեցող «բնապահպանություն» տերմինը:

Օրենսգրքում սահմանված է.

«Ջրամատակարարման համակարգ – ինժեներային կառուցվածքների համալիր, որի միջոցով ջուրը վերցվում է, մշակվում, տեղափոխվում և տրվում սպառողներին»:

Այստեղ կոռեկտ կլինի «սպառողներ»-ի փոխարեն օգտագործել «ջրօգտագործողներ» բառը, որն իր մեջ ներառում է ինչպես ջրի սպառումը, այնպես էլ՝ վարձակալումը: ՌԴ ջրային օրենսգրքում [2] «ջրօգտագործող» հասկացությունն ունի բոլորովին այլ իմաստ՝

դրանք այն իրավաբանական և ֆիզիկական անձինք են, որոնց տրված է ջրային օբյեկտների օգտագործման իրավունք: Մեր կարծիքով այդպիսի սահմանումը կարող է էականորեն խախտել ջրային ռեսուրսների կառավարման առաջարկվող հայեցակարգի տրամաբանական հիմքը: Ջրային օբյեկտների օգտագործման իրավունք ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց նպատակահարմար է անվանել «ջրային օբյեկտի կառավարիչ»: Ջրային օբյեկտից ջուրը ջրօգտագործողներին տրամադրող իրավաբանական և ֆիզիկական անձին անվանենք «ջրամատակարար»:

Կարևոր ենք համարում «ջրատնտեսական համակարգ» հասկացության սահմանումը: Դա ջրային և բնական այլ ռեսուրսների օգտագործման համատեղ միջոցառումների և/կամ կառույցների համալիր է, որը հնարավորություն է տալիս լավագույն ձևով բավարարել բոլոր մասնակից ջրօգտագործողների պահանջները:

ՀՀ ջրային օրենսգրքի գլուխ 22-ն ունի «Ջրերի վրա վնասակար ներգործության կանխումն ու վերացումը» անվանումը: Ակնհայտ է, որ այն, ինչ շարադրված է վերոհիշյալ գլխի 85 և 86 հոդվածներում, ըստ էության վերաբերվում է ջրերի վնասակար ազդեցությանը, այլ ոչ թե ջրերի վրա վնասակար ներգործությանը: Համապատասխան հասկացության սահմանումը հոդված 1-ում անհրաժեշտ է:

Օրենսգրքում չի տրված «ջրամբար» հասկացության սահմանումը, որի վերաբերյալ մանրակրկիտ վերլուծություն է կատարված [5]-ում, որտեղ առաջարկվում է «արհեստական լճակներ»-ը տարանջատել «ջրամբար»-ից ըստ ծավալային ցուցանիշի: Առաջարկվում է ջրամբար անվանել 0,5 միլիոն մ^3 և ավելի ծավալ ունեցող արհեստական լճերը:

Ջրային օբյեկտների ջրապահպանման գոտիների և նրանց ափամերձ վայրերի պահպանման դրույթների վերաբերյալ ասվում է [6]-ում.

«Ջրապահպանման գոտին դա այն տարածքն է, որը սահմանակցում է մակերևութային ջրային օբյեկտների ակվատորիաներին (ջրատարածքներին) և որտեղ, նպատակ ունենալով կանխել ջրային օբյեկտների աղտոտումը, աղբակալումը, տղմակալումը և հյուծումը, ինչպես նաև պահպանելու կենդանական և բուսական աշխարհը, օբյեկտների համար հաստատվում է տնտեսական և այլ տիպի գործունեության հատուկ ռեժիմ»:

ՀՀ ջրային օրենսգրքում այս կարևոր խնդրին ոչ բավարար լուծում է տրված, որի հետևանքով հանրապետությունում՝ այս ոլորտում ունենք բարդ իրավիճակ:

Առանձին ուշադրության է արժանի «պետական նշանկության հիդրոհանգույց» հասկացության սահմանումը: Դրանք պետք է լինեն ջրային օբյեկտների այն հանգույցները, որոնք պետության համար ունեն ազգային անվտանգության նշանակություն (Արփա-Սևան թունել, խոշոր ջրամբարներ և այլն):

Օրենսգրքի հոդված 1-ում ընդհանրապես չեն բերված «ջրառ», «թափոնաջրեր», «ցամաքուրդ», «գետերի և ջրամբարների ջրապահպանման գոտի», «ջրային հարաբերություններ» հասկացությունները, որոնց մասին բազմաթիվ անգամ խոսվում է Օրենսգրքի այլ հոդվածներում:

Մեր կարծիքով Օրենսգրքի հոդված 1-ում տրված «ջրատնտեսական հաշվեկշիռ», «պետական ջրային կադաստր», «շրջանառու ջրամատակարարում» հասկացությունները հիմնականների դասին չեն պատկանում և դրանց մասին պետք է խոսել Օրենսգրքի համապատասխան գլուխներում: Ինչ վերաբերվում է «ջրի ազգային ծրագիր» հասկացությանը, ապա այն արմատական վերախմբագրումից հետո, որպես առանձին հոդված, պետք է ներկայացվի Օրենսգրքի «Գլուխ 1, Հիմնական դրույթներ» բաժնում:

Հաշվի առնելով կատարված վերլուծությունը, առաջարկվում է ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 1-ը շարադրել.

Հոդված 1. Ջրային տնտեսության բնագավառում օգտագործվող
հիմնական սահմանումները և հասկացությունները

Ջրային ռեսուրսներ – մակերևութային և ստորերկրյա բնականոն վերականգնվող ջրային պաշարներ:

Ջրային օբյեկտներ – ցամաքում և ընդերքում ջրերի կուտակում: Լինում են բնական (գետեր, լճեր, առվակներ, ճահիճներ, ստորերկրյա ջրավազաններ) և արհեստական (ջրամբարներ, արհեստական լճակներ):

Ջրային հարաբերություններ – ջրային օբյեկտների տնօրինման, կառավարման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերություններ:

Ջրեր – ջրային օբյեկտներում առկա ջուրը:

Ստորերկրյա ջրեր – Երկրի ընդերքում առկա ջրային ռեսուրսները:

Մակերևութային ջրեր – ջրեր, որոնք գտնվում են երկրի մակերևույթի վրա մշտապես կամ ժամանակավորապես:

Ջրամբար – հիմնականում գետի հոսքը կարգավորելու նպատակով կառուցված արհեստական լիճ՝ 0,5 միլիոն մ^3 և ավելի ծավալով:

Արհեստական լճակ – արհեստական լիճ, որի ծավալը պակաս է մեկ մլն. մ^3-ից:

Ջրընդունիչ – կառուցվածքների և սարքավորումների համակարգ, ջրային օբյեկտից (այդ թվում՝ հորատանցքերից) ջուր վերցնելու համար:

Ջրի վարձակալություն – ջուրն օգտագործումից հետո քանակի և որակի սահմանված փոփոխությամբ ջրամատակարարին վերադարձնելու գործարք:

Ջրի սպառում – կարգավորվող սակագնով բնակչության և տնտեսության պահանջները բավարարելու համար ջրի անվերադարձ օգտագործում:

Ջրօգտագործում – ջրերը վարձակալության կամ սպառման տրամադրելը:

Ջրային օբյեկտի հյուծում – ջրային օբյեկտի բարվոք էկոլոգիական վիճակը ապահովող թույլատրելի նվազագույնից ցածր ջրի ծավալի կամ հոսքի կրճատում և որակի անկում:

Ջրերի աղտոտում – ջրերի որակական կազմի և հատկությունների վափոխման գործընթաց, որը մարդու գործունեության և բնական երևույթների հետևանքով առաջացնում է ջրերի սահմանված որակի վատացում:

Ջրերի պահպանում – ջրերի աղտոտումը, աղբոտումը, հյուծումը նախականխող ու վերացնող միջոցառումների համակարգ:

Թափոնաջրեր – օրգանական և անօրգանական նյութերով աղտոտված ջրեր: Առաջանում են արդյունաբերական, գյուղատնտեսական, կենցաղային և ռազմական գործողությունների հետևանքով:

Ջրամատակարարման համակարգ – ինժեներային կառուցվածքների համալիր, որի միջոցով ջուրը վերցվում է ջրային օբյեկտներից, մշակվում, տեղափոխվում, ամբարվում և տրվում է ջրօգտագործողներին:

Ջրատնտեսական համակարգ – ջրային և որոշ բնական այլ ռեսուրսների օգտագործման համտեղ միջոցառումների և/կամ կառույցների համալիր:

Ջրային օբյեկտի կառավարիչ – իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տրված է ջրային օբյեկտի օգտագործման և շահագործման իրավունք:

Ջրամատակարար – ջրային օբյեկտից ջուրը ջրօգտագործողներին տրամադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

Ցամաքուրդ – տվյալ տեղամասում գրունտային ավելցուկային ջրերը հավաքող (հեռացնող) հատուկ կառուցվածք:

Ջրային օբյեկտների ջրապահպանման գոտի – ջրային օբյեկտին սահմանակցող հաստատված չափսերի տարածություն, որը նախատեսված է մակերևութային ջրերը աղտոտումից, աղբոտումից, տիղմակալումից և հյուծումից պահպանելու համար:

Ոռոգում – միջոցառումների համակարգ, որն անհրաժեշտ է մշակաբույսերին անհրաժեշտ ջրի պակասը լրացնելու համար:

Ջրերի վնասակար ազդեցություն – հեղեղումներ, ջրածածկումներ, ողողումներ, հողերի ճահճակալում, աղակալում, կառուցվածքների ավերում և այլ վնասակար երևույթներ, որոնք առաջանում են մակերևութային և ստորերկրյա ջրերի ազդեցության հետևանքով:

Պետական նշանակության հիդրոհանգույց – ռազմավարական նշանակություն ունեցող հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր, որոնց շահագործումը, վերանորոգումը և պահպանումն իրականացվում է բյուջեի հաշվին՝ առաջնահերթության իրավունքով:

Ջրային ֆոնդ – Հայաստանի Հանրապետության բոլոր ջրային օբյեկտների և հիդրոտեխնիկական կառուցվածքների համախումբ:

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

О. В. Токмаджян, Л. А. Чилингарян, В. Б. Мкртчян,
Г. Ф. Мелконян, А. В. Симонян

Основные понятия и определения, применяемые в области водного хозяйства

В статье проведен критический анализ понятий и определений Водного Кодекса Республики Армения, применение которых в некоторых случаях приводит к неприемлемым в законодательстве двойственным комментариям. Исходя из новой концепции управления водными ресурсами, сформулированы понятия «водные ресурсы», «водные объекты», «воды», «подземные и поверхностные водные запасы», «аренда воды», «водопользование», «водопотребление», «гидроузел государственного значения» и др. Авторы предлагают принять соответствующую статью Водного Кодекса Республики Армения в новой редакции.

Գրականության

1. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք, Երևան, 1992:
2. Водный Кодекс Российской Федерации. М. 1995.
3. Водный Кодекс Республики Молдова. Кишенев. 1993.
4. Советский энциклопедический словарь. М. СЭ, 1987, С. 231.
5. *Գաբայան Գ. Ս., Ռոքմաջյան Հ. Վ.* - Հայաստանի ջրամբարների համակարգումը և դասակարգումը ըստ նրանց հիմնական բնութագրերի: Երևան, Ագրոգիտություն, 1996, էջ 12:
6. Положение о водоохранных зонах и их прибрежных защитных полосах. Постановление Правительства РФ от 23.11.1996г. № 11404.